Egretta Garzetta

16+

Երկու արև

Egretta Garzetta
երկու արև

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=67872726
SelfPub; 2022

Аннотация

Կյանքը հարուստ է անակնկալներով: Ոչ մեկը չի կարող գուշակել կամ ստույգ ասել, թե հաջորդ վայրկյանում ինչ է կատարվելու. կապվա՞ծ է արդյոք այդ իրադարձությունը անցյալի հետ, կունենա՞ ինչ-որ նշանակություն ապագայում, կփոխի՞ վերաբերմունքը ներկայի հանդեպ: Առհասարակ՝ ունի՞ գոյություն "ներկա" հասկացությունը: PDF-формат издания не отображает используемый в книге шрифт.

Egretta Garzetta
երկու արև

Գալի՞ս էին, անվե՞րջ գալիս էին: Արմենը ծանր շնչեց: Վերնաշապիկը արյունոտ էր: Ու դա իր արյունը չէր:

Ինքնաթիռով պիտի գար, սակայն տոմս չլինելու պատճառով համաձայնվեց մեկնել ավտոբուսով: Արդեն Հայաստանում էին, հայկական հողի վրա, ու կատարվեց այն ինչ հետո ոչ մեկը բացատրել չկարողացավ: Երբ աչքերը բացեց, մշուշոտ հայացքով ընկալեց, որ գտնվում է ավտոբուսից դուրս հողի վրա, կողքին մի երիտասարդ էր պառկել: Աչքերը փակեց: Շտապ օգնության մեքենաներով իրեն ու մնացած ուղևորներին տեղափոխեցին մոտակա հիվանդանոց: Պարզվեց որ ուղեղի ցնցումից բացի ինքը ուրիշ ոչ մի լուրջ վնասվածք չունի: Կինն ու որդին Երևանից գալիս էին:

Հիվանդանոցի երկար միջանցքում մարդաշատ էր: Հետաքրքիր է ինչպես է իր կողքը նստած տղան: Շատ համակրելի ու հաճելի անձնավորություն: Վեց ժամ լինելով իրար կողք՝ հասցրին ծանոթանալ:

Արմենը նայեց վերնաշապիկի ալ ու նույնիսկ սևացած կետերին՝ սա Կամոյի արյունն էր: Բժիշկները իրեն կարգադրել էին մնալ հիվանդասենյակում, սակայն չէր կարող այնտեղ նստել ու եկել կանգնել էր Կամոյի դռան դիմաց: Ինչքան սպասեց այնքան ժամանակը կամաց առաջ

գնաց: Ոչ մեկը դուրս չէր գալիս: Չլինի թե՞... չէ՛, չի կարող պատահել... գնաց նստեց աթոռին, սակայն չհամբերեց, նորից ոտքի ելավ: Ինչպե՞ս է այդ տղան: Քանի՞ տարեկան էր, քսանչորս կարծես: Զբաղվում է երաժշտությամբ, ընկերների հետ ունեն խմբակ, երգում է ու նվագում: Արմենը նորից նստավ, փակեց աչքերը, զգում էր նմանություն իրենց մեջ: Չէ որ ինքն էլ երգում... ժամանակի՜ն... երբ տասնյոթ տարեկան էր. ու երբ դպրոց էր ավարտում, հայրը ստիպեց ընդունվել տնտեսական: «Երգը արհեստ չի»: Իսկ այս տղային հենց հայրն էր աջակցում ու քաջալերում: Նախանձվե՞ց երիտասարդին: Ո՛չ: Ընդհակառակը, ուրախացավ, որ աշխարհում կան հայրեր, որոնք նեցուկ են դառնում որդիների երազանքներին: Իսկ ի՜ր հայրը... ու՞ր է հիմա... գնաց խոպան ու կորավ... հայտնի էլ չի կենդանի՞ է, թե՝ ո՛չ...

Վերջապես դռները բացվեցին ու բժիշները դուրս եկան:

–Դու՞ք... այստեղ ի՞նչ եք անում... ինչու պալատում չե՞ք...

–Ինչպե՞ս է նա: Վիրահատությունը վաղուց վերջացել է: Բերել եք պալատ, դուրս չեք գալիս: Ինչպե՞ս է Կամոն,—հարցերին հարցով պատասխանեց Արմենը:

–Կապրի: Գնացե՛ք ձեր պալատ,—կարգադրեց բժիշկը ու դարձավ բուժքրոջը,—ուղեկցե՛ք նրան հիվանդասենյակ, հետևե՛ք որ դուրս չգա:

–Չի՞ կարելի տեսնել Կամոյին:

–Ո՛չ:

–Գնացի՛նք,—վախվորած ասաց բուժքույրը:

Սակայն պալատում Արմենը երկար չմնաց, վերադարձավ Կամոյի մոտ, որոշեց, մինչև հարազատների գալը մնալ այստեղ: Մնացած հիվանդների հետևից ընկած բժիշկները հազիվ թե նկատեն իր բացակայությունը: Կամաց բացեց դուռը ու մտավ մեջ: Կամոյի աչքերը փակ էին, ուրեմն քնած է:

Արմենը նստեց աթոռին ու մտահոգ նայեց երիտասարդի վիրահատությունից հետո գունատ դեմքին: Հետաքրքիր բան, իրեն ոչի՜նչ չի եղել, իսկ այս տղան ջարդուփշուր է, աջ ձեռքը, ոտքը, երեք կող, էլ ի՜նչ մնաց . . . Հարազատներն էլ Հայաստանում չեն: Նրանք նույնիսկ չգիտե՛ն կատարվածի մասին:

–Ձեզ չասացի՞ն մնա՛լ պալատում:

Արմենը սթափվեց մտքերից ու նայեց անդուր ձայնի կողմ: Դռան արանքում ցցվել էր նույն բժիշկը որն ուղարկել էր իրեն հիվանդասենյակ:

–Դուք այստեղ գտնվելու իրավունք չունեք:

–Նա այստեղ ոչ մեկ չունի,—փորձեց արդարանալ Արմենը:

–Դուք նրան կարող եք վնասե՛լ . . . կես ժամ առաջ նա բարդ վիրահատություն է ունեցել, իսկ դուք մուկնուկատու եք խաղում:

Արմենը դուրս եկավ ու այլևս չեկավ Կամոյի մոտ: Միայն խնդրեց իրեն տեղյակ պահել, երբ նա ուշքի գա: Երկար

չանցած բուժքույրը հայտնեց, որ երիտասարդը աչքերը բացել է: Արմենը անհապաղ շարժվեց նրա հիվանդասենյակ ու բուժքրոջ հետևից մտավ մեջ:

Երիտասարդը թույլ էր, սակայն ժպտում էր: Նրա լուսավոր աչքերը մի պահ խոնավացան, հազիվ շարժելով շրթունքները շշնջաց .

–Ձե՛ռքս . . . կկարողանա՞մ նվագել . . .

Արմենը քիչ մնաց ծիծաղեր: Հազիվ է ազատվել մահվան ճիրաններից, հարցնում է նվագելու մասին: Բայց հոգու խորքում լավ էր հասկանում նրան: Ազատվել տաղանդից, որը քո էությունն է, մահվան է հավասար:

–Կկարողանա՛ս, դու ամեն ինչ էլ կկարողանաս,— հանգիստ պատասխանեց բժիշկը:

Պարզվեց այդ չոր ու կոպիտ արարածը ժպտալ գիտի:

Երեկո էր երբ տեղ հասան Վեռան ու Ռոբոն: Որդուն Ռոբերտ ոչ մեկը չէր ասում, Ռոբո էր դարձել: Կինը մի քանի արցունք թափելուց հետո հանգստացավ: Որդին շփոթված էր, նույնժամ անչափ ուրախ:

Ի պատիժ իրեն վատ պահելու՝ բժիշկը որոշեց Արմենին գիշերը թողնել հիվանդանոցում, բաց թողնել միայն առավոտյան: Վեռան ու Ռոբոն մնացին մոտակա հյուրանոցում:

–Մայրիկս գիտի՞,—տխուր ձայնով հետաքրքրվեց Կամոն:

–Ոչ:

–Նա հիմա իրեն տեղ չի գտնում: Ու՞ր է հեռախոսս: Պիտի

խոսեմ նրա հետ:

–Ամեն ինչ մնաց ավտոբուսի մեջ ու ցիրուցան փողոցով մեկ: Երևի ոստիկանությունում է: Համարը ասա, կնոջս հեռախոսով կզանգես վաղը:

Կամոն ոչինչ չասաց: Երկուսն էլ լռեցին:

–Մեռնողներ կա՞ն,—հանկարծ հարցրեց տղան:

–Կան . . .

–Շա՞տ:

–Չորս հոգի:

–Իսկ ինձ ո՞ր շարքում են դասել,—նորից ժպտաց երիտասարդը:

–Հիմա՛ր,—կախվեց քաշեց նրա ականջը:

Այդ ոտից գլուխ ջարդված երիտասարդի մեջ կար զարմանալի նմանություն իրեն, այո՛ իրեն: Ինքն էլ մի ժամանակ նույնն էր: Նույնիսկ ամենավատ ու անհուսալի պայմաններում գտնում էր հումորի տեղ, հաճախ՝ սև հումորի:

«Հիմարին» իրենց հետ տարավ Երևան, հետագա բուժումը շարունակվեց այնտեղ, իսկ մինչև ապաքինվեր պիտի մնար իրենց տանը:

Սակայն շատ բան փոխվեց, երբ եկավ Կամոյի մայրը:

Արմենը հիվանդանոց եկավ ինչպես միշտ նույն ժամին . փոխանակ ճաշի գնա ընդմիջումին, եկավ երիտասարդի մոտ, որպեսզի միասին ճաշեն: Չնայած հիվանդանոցում բավական ախորժելի ճաշեր կային, «լրացուցիչ կերից» Կամոն չէր հրաժարվում:

–Այսօր հինգերորդ օրն է ինչ այստեղ եմ: Այսօր մայրիկս պիտի գա:

–Լավ է: Ուրեմն դրա համար բարձր է տրամադրությունդ:

Քսանչորս տարեկան տղամարդը չորս տարեկանի նման ուրախանում էր մոր գալուն: Քառասունն անց տղամարդու համար դա քթի տակ ժպտալու պատճառ էր: Ինքը մորը չպատմեց ավտովթարի մասին. խնայեց նրա ծնողական սիրտը:

Հեռախոսի զանգը հնչեց ու Արմենը դուրս եկավ պատասխանելու: Աշխատանքից էր. ինքը բանկում էր աշխատում: Տարված խոսակցությամբ Արմենը չնկատեց ինչպես հիվանդասենյակ մտավ մի կին՝ Կամոյի մայրը:

–Վերջապե՛ս,—խոսակցությունը ավարտելուց հետո արտասանեց Արմենը: Զգաց ինչպես մեջքի հետևում բացվեց դուռը ու լսեց Կամոյի ձայնը. «Նա այդտեղ է մայրիկ»:

Արմենը շրջվեց դեպի դեպի դուռը ու տեսավ դիմացը կանգնած անծանոթին:

–Ուրեմն դու՞ք եք Կամոյի մայրը:

–Այո,—հազիվ պատասխանեց կինը: Նա քարացած աչք չէր պոկում Արմենի դեմքից: Զարմանքի ու սարասափի խառնուրդ էր արտահայտում նրա ողջ էությունը: Բացուխուփ արեց բերանը, դողացող ձեռքերը սեղմեց կրծքին ու չռեց աչքերը այնպես, ասես հիմա հանկարծամահ ընկնելու է գետնին:

Արմենին իհարկե տարօրինակ թվաց նման պահվածքը:

Նա երկար սպասեց, որ կինը գոնե մի բառ արտասանի, սակայն հասկանալով, որ նա միայն շանթահարի նման ցցվել իրեն է նայում ու քթի տակ շշնջում անհասկանալի կցկտուր բառեր, առաջարկեց մտնել Կամոյի մոտ: Որդու մոտ կինը արդեն հանդարտվեց, սակայն Արմենի աչքից չվրիպեց նրա հուզմունքը . ինչպես նայում է մե՛կ իրեն, մե՛կ որդուն: Երևի չափից ավելի մտատանջությունից է: Արմենը գտավ հազար բացատրություն նրա պահվածքին:

–Դե՛ լա՛վ, ես գնամ, աշխատանքից եմ եկել: Երեկոյան կգամ: Իսկ ձեզ ինչպես հասկացա դժվար կլինի այստեղից հանել . . . հիմա՛,—ժպտաց Արմենը,—երեկոյան ձեզ կտանեմ մեր տուն:

Ցտեսություն ասելուց հետո դուրս եկավ ու ողջ ճանապարհին մտածում էր այդ կնոջ մասին: Կամոյի մայրը իրեն դուր չեկավ: Դե՛, ինչու՞ նա իրեն պիտի դուր գար: Սակայն չգիտես ինչու սպասում էր լրիվ ուրիշ մարդու: Կամոյի նման արև-երիտասարդը պիտի ունենար իր նման արև մայր: Իսկ այս անդուր անձնավորությունը Կամոյի հակապատկերն էր: Ու սրտի խորքում դեմ էր նրա ներկայությունից իր տան մեջ: Ավելի լավ է մերժի հրավերը ու մնա հյուրանոցում կամ բարեկամների մոտ: Բայց ի՞նչ բարեկամ . . . հինգ օրվա մեջ միայն երկու ընկեր է եկել Կամոյի մոտ, երկուսն էլ նրա խելքին:

Կնոջը զգուշացրեց Կամոյի մոր մասին ու աշխատանքից հետո եկավ ուղիղ հիվանդանոց: Զարմանալի փոփոխություն էր տեղի ունեցել Նաիրայի

մեջ՝ այդպես էր Կամոյի մոր անունը: Արդեն ժպտում էր, չնայեց տարօրինակ հայացքով, նույնիսկ շնորհակալություն հայտնեց իր հոգատարության համար:

–Մենք երկար խոսեցինք Կամոյի հետ, ու նա պատմեց ինչքան լավություն եք արել:

Արմենը ուշադիր լսում էր նրան, զգում անկեղծ ջերմություն: Մնալ իրենց տանը Նաիրան հրաժարվեց, ասաց ունի ընկերուհի, ում մոտ կմնա: Սրտի խորքում Արմենը ուրախացավ, սակայն թեթև հակաճառեց .

–Ո՛չ-ո՛չ-ո՛չ, կմնա՛ք մեր տանը:

Նաիրան հոնքերի տակից նայեց նույն հայացքով ինչպես միջանցքում ակնապիշ մնացել էր, սակայն արագ հավաքեց իրեն ու կրկնեց .

–Կմնա՛մ ընկերուհուս տանը:

Ի՞նչ էր փնտրում կամ գտել էր իր մեջ՝ Արմենը այնպես էլ չհասկացավ: Իր մոր տարիքին կինը, շեկ ներկված մազերով, խնամված դեմքով, մի քիչ գեր, սակայն համակրելի տեսք ուներ: Բայց կար նրա մեջ վանող ու թշնամական հատկանիշ: Երկուսն էլ զգում էին թաքուն հակակրանք իրար հանդեպ:

Անցավ երկու ամսից ավելի: Կամոն արագ էր ապաքինվում: Երիտասրդ օրգանիզմը բոլոր ուժերը զցել էր վերականգման վրա: Ընթացքում Նաիրան վերադարձավ Ռուսաստան ու ետ եկավ:

–Սրա՞ համար էիք այնքա՜ն ճանապարհ անցել,— բացականչեց Արմենը, երբ տեսավ Կամոյին կիթառը

ձեռքում:

Երիտասարդը ժպտաց:

–Առանց սրա ես կյանք չունեմ:

Մի քանի անգամ նույնիսկ միասին երգեցին: Տեղավորվում էին հիվանդանոցի առջևի պուրակի նստարաններին ու երգում: Նման դեպքերում Նաիրան քաշվում էր հեռու, ու նրա ներկայությունը լրիվ մոռացվում էր:

Երբ Կամոն նվագում էր կամ երգում, նա միաձուլվում էր մեղեդու հետ, դառնում իսկական արև:

Արմենը թև էր առնում նրա կողքին: Ասես կյանքը տվել էր հնարավորություն պտտել ժամանակի անիվը ետ ու վայելել սիրելի արվեստը, առանց որի գոյություն չէր պատկերացնում: Հաճելի էր սուզվել այդ աշխարհը նորից: Եթե բուժքույրերը չգային Կամոյի հետևից, ապա կարող էին մոռանալով ամեն ինչ երգել: Լինում էին վայրկյաններ երբ Արմենի մեջ արմատ էին առնում երգով զբաղվելու իղձերը: Բայց դա միայն ակնթարթային թուլություններ էին: Իրականությունը արագ էր սթափեցնում ու վերադարձնում սովորական կյանք: Սրտի խորքում զգում էր ափսոսանք չիրականացած երազանքների վերաբերյալ: Ավելի հաճախ էր ուզում տեսնել Կամոյին: Նրա ձիրքը երաժշտական արվեստի նկատմամբ բարի նախանձ էր առաջ բերում: Թող զոնե մեկը այս աշխարհում հասնի նպատակին: Թող աշխարհը վայելի նրա սքանչելի ձայնը: Կամոն ուներ այն ինչ ինքը չի ունեցել երբե՛ք՝ խիզախությու՛ն, նպատակասլացությու՛ն ու գլխավորը՝

ծնողների օգնությու՛ն: Արև-տղան պիտի ունենա արև ապագա:

Կամոյին դուրս գրեցին հիվանդանոցից: Արմենի բազմաթիվ թախանձանքները չօգնեցին: Նաիրան տարավ նրան ընկերուհու տուն: Ու մնացին այնտեղ ևս մի շաբաթ: Ապա մեկնելու էին Ռուսաստան:

Արմենին այս պահվածքը փախուստ էր հիշեցնում: Չէ որ երիտասարդը լուրջ վնասվածքներ ուներ, ու վերականգնման երկար շրջան էր սպասում: Անչափ հետաքրքիր էր ինչու՛: Բայց և հասկանում էր, որ հարցնելու իրավունք չունի: Նույնիսկ կինը՝ Վեռան նկատել էր Նաիրայի զգուշավոր վերաբերմունքը իրենց նկատմամբ:

Քանի մեկնելու օրը մոտենում էր, այնքան տագնապալի էր Նաիրայի տեսքը:

–Մա՜մ, ինչու ես այդքան հուզվում չեմ հասկանում,—հաճախ կրկնում էր որդին:

Վերջին օրերին խուճապի հասած տրամադրություն էր զգում այդ կնոջ մեջ: Կարծես ինչ-որ բան ուզում է ասել: Գնում էր գալիս, սակայն՝ լռում:

Եկավ ճանապարվելու օրը:

Կամոն բռնել էր հենակը:

–Շնորհակալ եմ ամեն ինչի համար, Արմե՛ն, ասես մեծ եղբայրս լինես: Քո՛ մեջ ձեռք բերի մեծ եղբորս, ում երազել եմ ունենալ մանկուց . . . սակայն բախտ չունեցա, ո՛չ քույր, ո՛չ էլ եղբայր ունենալ:

–Կամո՛,—կտրեց նրա խոսքը մայրը:

–Մա՛մ ջա՛ն: Լա՛վ, լռում եմ, գնացի՛նք: Եթե գաս Ռուսաստան իմացի՛ր, Սոչիում փոքր եղբայր ունես: Մա՛մ, գնացի՛նք:

Այս խոսքերը արտասանելուց հետո երիտասարդը ժպտաց ու ճամփորդական պայուսակը հետևից քաշելով ուղղվեց դեպի օդանավակայանի շենքի մուտքը:

–Բարի թռիչք,—արև տղու հետևից մաղթեց Արմենը:

–Արմե՛ն,—հանկարծ ամուր սեղմեց նրա բազուկը Նաիրան, որի ներկայության մասին լրիվ մոռացել էր:

–Ի՞նչ:

–Դու չգիտես: Կամո՛ն,—Նաիրայի ձեռքը դողդողաց ու ավելի ուժեղ սեղմեց Արմենի ձեռքը: Աչքերը լցվեցին արցունքներով:

–Ի՛նչ . . . ձեզ ի՞նչ պատահեց: Ջուր բերեմ: Սպասեք կանչեմ Կամոյին:

Որդու անունը լսելով կինը ավելի շատ հուզվեց:

–Ո՛չ, ո՛չ . . . նա ոչինչ չգիտի, ինչպես և դու . . .

Նաիրայի շրթունքները կծկվեցին:

–Ինչի՞ մասին եք խոսում: Ինչու՞ վատացաք:

Կամոն արդեն հերթ էր զբաղեցնում որպեսզի անցնի ուղեբեռի ստուգումը: Ժպտաց ու ձեռքով կանչեց մորը:

–Նա չգիտի՛, ինչպես և դու՛ . . . արդեն քանի օր է կրկնում է, որ դու նրա մեծ եղբայրն ես . . . արդեն չեմ դիմանում . . . վաղ թե ուշ իմանալու եք . . .

–Ի՞նչ պիտի իմանանք: Հետո ի՛նչ որ կրկնում է: Ես էլ անդադար ասում, որ նա ասես փոքր եղբայրս լինի . . . շատ

սիրեցի այդ տղային . . .

–Բայց դու իսկականում նրա մեծ եղբայրն ես . . .

Արմենին թվաց, թե Նաիրան զառանցում է:

–Ի՞նչ եք խոսում: Չեմ հասկանում ձեզ:

Կինը բաց թողեց Արմենի ձեռքը ու շնչաց հազիվ լսելի .

–Երբ հանել ես նրան ավտոբուսի միջից . . . եղբորդ ես փրկել Արմե՛ն, դու իրավունք ունես իմանալ ճշմարտությունը: Երկու ամսից ավելի Կամոյին ես խնամել ու չես իմացել, որ նա քո հարազատ եղբայրն է: Երկու ամսից ավելի եղել ես նրա կողքին ու չես իմացել: Ե՛ս, չե՛մ ասել . . . ու չէի՛ ուզում ասել . . .

–Ի՞նչ եք խոսում,—քիչ մնաց գոռար Արմենը:

–Սու՛ս, սու՛ս մնա . . . նա ոչինչ չպիտի իմանա . . . նա չգիտի, որ մեզնից առաջ հայրդ ընտանիք է ունեցել . . . բայց դու այնքան նման ես հորդ . . . կրկնօրինակն ես . . . առաջին իսկ հայացքից հասկացա . . . ինչպե՞ս նման ես հայրիկիդ . . . Կամոն հեռվում սպասում էր մորը:

Արմենը քարացել էր: Լսածից ոչինչ չէր հասկանում: Ի՞նչ է խոսում այս կինը: Գլուխը պտտվեց: Ուղևորներն ու նրանց ճանապարհ դնողները քանի գնում շատանում էին: Արմենը անհանգիստ շունչ քաշեց: Ուղեղում չէր տեղավորվում լսածը: Դիմացը կանգնած կինը սրբում էր արցունքները: Ու չէր ստում: Ա՛յ հիմա, Արմենը վստահ էր, նա չի՛ ստում: Բայց և ընկալել ու հավատալ լսածին չէր կարող:

–Հիմա չգիտեմ պետք էր ասել թե ոչ: Բայց դու՛ք . . . ձեր երգերը . . . քո վերաբերմունը նրա հանդեպ . . . ա՛խր

արդեն չեմ կարող լռել,—Նահիրան մեջ քաշեց արցունքները, աշխատեց չլացել: Նայեց ուղիղ աչքերի մեջ,—ձևացրու որ ոչինչ չեմ ասել . . . նրան էլ կասեմ, հետո՛ . . .

Հանկարծ վերադարձավ Կամոն:

–Մա՛մ գնացինք: Ուշանալու ենք քո պատճառով:—Բռնեց մոր ճամպրուկը: Դե՛, հաջող մեծ եղբայր,—ասաց Կամոն ու նորից գրկեց Արմենին:

Արմենը մնաց քարացած: Ճպճպացրեց աչքերը ուշադիր նայեց շուրջը, ապա օդանավակայանի շենքը մտած Կամոյին, որը մի ձեռքով հենակին էր հենվել, մյուսով ճամպրուկն էր քաշում հետևից: Նոր գլխի ընկավ, ինչն էր իրեն հմայել երիտասարդի մեջ, չէ՞ որ դա ի՛նքն էր: Եթե հետևից նայես կմտածես, որ արև երիտասարդը Կամոն չի, այլ՝ Արմենն է քսանչորս տարեկան ժամանակ: Ինչպես հայրն էր իրեն ասում . «արև-տղաս»: Ա՛րև, ա՛րև, ա՛րև . . . Այդ բառը անհապաղ ուզում էր արտասանել, հենց տեսնում էր Կամոյին: Նույնիսկ առաջի՛ն օրվանից, առաջի՛ն իսկ պահից, երբ նա նստեց ավտոբուսի մեջ իր կողքին, ժպտաց իր լուսավոր աչքերով ու առաջարկեց ծանոթանալ: Արմե՛ն, Արմե՛ն . . .

Տղամարդու խավարած ուղեղում կայծակի նման փայլատակեց այն օրը, երբ հայրը հեռացավ ընտանիքից:

Ապակու հետևից երևում էր ինչպես բարձրանում են երկրորդ հարկ ուղևորները, նրանց թվում և Կամոն մոր հետ: Երիտասարդը ձեռքով ցտեսություն արեց, ժպտաց:

Գույնը կորցրած Արմենը անշարժ էր: Նրան թվաց, թե

ապակու մյուս կողմից ինքն իրեն է հրաժեշտ տալիս:

P. S. Արմենը Ռոբոյի հետ մտավ դահլիճ: Այն լիքն էր հյուրերով: Համերգը իհարկե նրա համար առանձին հետաքրքրություն չէր ներկայացնում, սակայն որդու երազանքին օգնական դարձած հորը տեսնելու ցանկությունը ստիպեց նստել ինքնաթիռ ու գալ Սոչի: Իհարկե Կամոյին վնասելու ցանկություն բնավ չուներ: Փոխվե՞լ էր վերաբերմունքը նրա հանդեպ: Չգիտե՛ր: Այդ շողշողուն տղան անմեղ է:

–Մե՛ծ եղբայր եկա՞ր,—վազեց ջերմությամբ գրկեց նրան Կամոն: Արդեն առանց հենակի էր,—հայրի՛կ, նա՛ է ով ինձ փրկել է, ու՛մ մասին օրուգիշեր պատմել եմ քեզ, ու մայրիկն չէր թողնում դեմքը ցույց տալ քեզ, թե մե՛կ էլ տեսար, սրան որպես որդի կհավանես, կփոխես իմ հետ, կհրաժարվես ինձնից: Քեզ հերոս տղան երգիչից շատ դուր կգա . ավտոբուսի միջից երեք հոգու է հանել:

Մինչդեռ Կամոն ողջագուրվում էր Ռոբոյի հետ, չնկատեց ինչպես մազերը սպիտակած հայրը դեմքի գույնն էլ սպիտակի փոխեց:

Արմենը անթարթ նայեց հորը:

–Արև-տղա՛ս,—թուքը կուլ տվեց հայրը:

–Ի՛նչ, հայրիկ . . .